ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2016թ. N------ -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքիքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 451-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Մոսկովյան փողոցի հ.3 շենքի (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.09.2005թ. հ.1626147 վկայական) Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությանը տրամադրված 1-ին հարկի 214.9 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 2021 թվականի հունվարի 25-ը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարան է դիմել Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպության տնօրեն Հարություն Խաչատրյանը՝ Երևանի Մոսկովյան փողոցի հ.3 շենքի առաջին հարկում, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքի համար կնքված պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու խնդրանքով:

Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևանի Մոսկովյան փողոցի թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին» հ.170-Ա որոշման հիման վրա նշված հասցեում գտնվող շենքի առաջին հարկի 214.9 քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, հինգ տարի ժամկետով տրամադրվել է Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությանը: Կազմակերպության հետ 2011 թվականին կնքվել է ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման հ.1063 պայմանագիրը, որից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում /հիմք՝ 09.03.2011թ. տրված անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2689911 վկայական/: Նշված պայմանագրի ժամկետը սահմանվել է մինչև 2016 թվականի հունվարի 25-ը:

Հաշվի առնելով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի բարձր հեղինակությունը, ինչպես նաև կազմակերպության գործունեության ուղղվածությունը և կարևորությունը կինոյի զարգացման գործում, նպատակ ունենալով աջակցելու Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությանը աշխատանքային գործունեություն ծավալելու նպատակով բավարար պայմաններ ունենալու հարցում, ներկայացվում է Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծ՝ Մոսկովյան փողոցի հ.3 շենքի 1-ին հարկում գտնվող տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Պայմանագրի գործողության ժամկետն երկարացնելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ